



Նատուրա 2000 գործիքակազմ (տեքստային բաղադրիչ) 2022թ.

«Նատուրա 2000» գործիքը մշակվել է «Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում Եվրոպական միության չափանիշներին համապատասխան» Թվինինգ ծրագրի շրջանակներում, որը հիմնվում է Հայաստանի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության և Ֆինլանդիայի հաստատությունների և փորձագետների համագործակցության վրա: Ի լրումն այս տեքստային բաղադրիչին՝ մշակվել են նաև սահիկահանդեսներ և հավելվածներ:

www.biodiversity.am



Այս հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն են կրում Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալությունը և Ֆինլանդիայի բնապահպանության ինստիտուտը (SYKE), և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Ներածություն	3
ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ	4
ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ	8
ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ և ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	20
CASE STUDY: Եվրոպական գետնասկյուռի վերածնունդը	23
CASE STUDY: Կովկասյան ընձառյուծի վերադարձը Հայաստան	26
CASE STUDY: Սպիտակապոչ արծվի վերադարձը Ֆինլանդիա	33
CASE STUDY: Թռչունների պահպանություն և աջակցություն Հայաստանի ձկնաբուծարաններին	36
CASE STUDY: ԿԻՊՐՈՍԻ կենդաբազմազանության մշտադիտարկումը՝ դեպքի ուսումնասիրություն	41



Հայաստանը, ԵՄ-ի հետ ստորագրելով Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, իրավական համակարգում մի շարք փոփոխություններ կատարելու և Եվրոպական չափանիշներին ներդաշնակեցմանն ուղղված քայլեր իրականացնելու պատրաստակամություն է հայտնել: Այդ փոփոխությունների ոլորտներից մեկը Հայաստանի բնական ժառանգության, այդ թվում՝ երկրի չափազանց հարուստ կենսաբազմազանության պահպանությունն է: «Նատուրա 2000»-ը ԵՄ-ի ողջ տարածքում առանձնացված պահպանվող տարածքների ցանց է, որի հիմքում ընկած է երկու հիմնական իրավական ակտ՝ Միջավայրերի վերաբերյալ հրահանգը (դիրեկտիվ) և Թռչունների վերաբերյալ հրահանգը:

«Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում Եվրոպական միության չափանիշներին համապատասխան» Թվինինգ ծրագիրը (2021-2022թթ.) նպատակ ունի աջակցելու ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ երկու հրահանգների կիրարկման համար հիմք ապահովելուն ուղղված ջանքերին՝ ամենախոցելի տեսակների և միջավայրերի պահպանությունն ապահովելով, ինչպես նաև պահպանվող տարածքների նոր համակարգի հիմնման, կառավարման, առաջխաղացման և մշտադիտարկման սկզբունքներ ներկայացնելով:

ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԹՈՋՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԿ ՀՐԱՋԱՆԳՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Նատուրա 2000»-ը պահպանվող տարածքների ցանց է, որը նախատեսված է Թռչունների վերաբերյալ հրահանգում և Միջավայրերի վերաբերյալ հրահանգում ընդգրկված հազվագյուտ և վտանգված կենդանատեսակների, բուսատեսակների և բնական միջավայրերի տեսակների պոպուլյացիաների երկարաժամկետ կենսունակությունն ապահովելու համար: Այն տարածվում է բոլոր 27 ԵՄ երկրների, ինչպես նաև Միացյալ Թագավորության՝ և՛ ցամաքային, և՛ ծովային տարածքների վրա:

«Նատուրա 2000»-ը բնության արգելոցների խիստ համակարգ չէ, որը բացառում է մարդկային գործունեության բոլոր տեսակները: Չնայած այն ներառում է բնության խիստ պահպանվող արգելոցներ, տարածքների մեծամասնությունը մասնավոր սեփականություն է: «Նատուրա 2000» տարածքների պահպանության և կայուն օգտագործման նկատմամբ մոտեցումն ավելի ընդգրկուն է՝ հիմնականում կենտրոնանալով այն մարդկանց վրա, որոնք աշխատում են բնությանը համահունչ և ոչ դրա դեմ: Այնուամենայնիվ, անդամ պետությունները պետք է ապահովեն վերոնշյալ տարածքների կայուն կառավարումը՝ և՛ Էկոլոգիական, և՛ տնտեսական տեսանկյունից:

Գիտահեն պահպանություն

Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահանգները հիմնվում են գիտական գիտելիքների վրա, որոնց հիմքում ընկած են կենսաբազմազանության մշտադիտարկումը և գիտական տվյալները: ԵՄ հրահանգներում ներառված տեսակներն ու միջավայրերը ցանկում ընդգրկվել են՝ ըստ որոշակի աշխարհագրական տարածաշրջանում իրենց վտանգվածության կարգավիճակի: Մի ամբողջ մայրցամաքի նկատմամբ նման մոտեցումը օրենսդրության մեջ կիրառվող գիտական գիտելիքների և դաշտային տվյալների կարևորության եզակի օրինակ է: Միջավայրերի դասակարգումը միասնականացվել է ԵՄ շրջանակներում չնայած անցյալում Արևելյան Եվրոպայում և Արևմտյան Եվրոպայում ընդունված գիտական մոտեցումների տարբերությանը: «Էմերալդ ցանցը» «Նատուրա 2000»-ի համարժեքն է ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների համար, ինչպիսիք են օրինակ Հայաստանն ու Շվեյցարիան: Այն ստեղծվել է Եվրոպական ցանցը ինտեգրելու նպատակով և հիմնված է Բեռնի կոնվենցիայի վրա: Ի տարբերություն ԵՄ հրահանգների՝ այն իրավական պարտադիր ուժ չունի:

Տեսակների և միջավայրերի կանոնավոր մշտադիտարկման արդյունքում ստացվում են տվյալներ, որոնք անհրաժեշտ են պահպանությանն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար:

Տեսակների և միջավայրերի կանոնավոր մշտադիտարկումն անհրաժեշտ է դրանց կարգավիճակի վերաբերյալ արդիական տեղեկություններ ունենալու համար: Մշտադիտարկումը (հրահանգներում նշվում է որպես «վերահսկողություն») համակարգային մոտեցում է տեսակների տարածվածության, դրանց միջավայրերի և պոպուլյացիայի միտումների, ինչպես նաև (բնական) միջավայրերի տարածվածության և որակային փոփոխություններին առնչվող միտումների վերաբերյալ տվյալների հավաքագրման նկատմամբ: Մշտադիտարկման աշխատանքներում հիմնականում կիրառվում են կենսաբանության ոլորտի փորձագետների

առկա և հասանելի կարողությունները: Ըստ Էուլթյան, շատ դեպքերում մշտադիտարկման և հաշվետվությունների ներկայացման պարտավարությունների կատարումը հիմնվում է նախկինում կատարված մշտադիտարկման վրա, որն էլ, իր հերթին, հիմնվում է հետազոտական կամ ՀԿ-ների գործունեության (որպես կանոն, կաթնասունների և թռչունների պարագայում) վրա: Հրահանգներով նախատեսվում է պահպանության կարգավիճակի վերաբերյալ սահմանված մեկ միասնական կառուցվածքին համապատասխանող հաշվետվությունների կանոնավոր ներկայացման վեցամյա ժամկետ: Անդամ պետությունները, որոնք որոշակի որակի ընդհանուր մակարդակին համապատասխան տվյալներ հավաքագրելու և վերլուծելու պարտավորություն ունեն, չափանիշները բավարարելու նպատակով հակված են լինում սեփական մշտադիտարկման համակարգեր ստեղծելուն. այսպիսով, նման պարտավորությունը մեծապես հանգեցնում է նաև կարողությունների ձևավորմանը: Հաշվետվությունների ներկայացման հետ կապված արդյունքները հասանելի են հետևյալ հղումով՝ nature-art17.eionet.europa.eu/article17.

«Նատուրա 2000» տարածքներից յուրաքանչյուրը, ինչպես նաև ԵՄ-ում տեսակների կամ միջավայրերի տարածվածությունը հնարավոր է ուսումնասիրել հետևյալ հղումով՝ natura2000.eea.europa.eu.

Բնությունն առաջնահերթություն է սահմանված տարածքներում

«Նատուրա 2000» սահմանված տարածքներում բնությունն ավելի մեծ առաջնահերթություն է, քան նույնիսկ տնտեսական զարգացումը, սակայն այն հակադրության մեջ չէ ավանդական կառավարման գործելակերպերի հետ (քանի որ կենսաբազմազանությունը շատ դեպքերում կախված է միջավայրերի կայուն օգտագործումից):

Պահպանվող տեսակների և միջավայրերի վրա զգալի բացասական ազդեցություն ունեցող ծրագրերն ու նախագծերը չեն կարող իրականացվել:

Այն ծրագրերի դեպքում, որոնք ենթադրում են «Նատուրա 2000»-ով սահմանված տարածքներին վնասակար ազդեցության թողնելու հավանականություն պարունակող գործողություններ, իրականացվում է ազդեցությունների հատուկ «Նատուրա 2000» գնահատում: Զգալի բացասական ազդեցություններ թողնելու բարձր հավանականություն ունեցող ծրագրերը կամ նախագծերը չեն կարող շարունակվել: Բացառություններ կարող են լինել միայն այն դեպքերում, որոնք վերաբերում են հանրային առողջությանը կամ անվտանգությանն առնչվող նկատառումներին: Սակայն նույնիսկ այդ դեպքերում պետք է սահմանվեն փոխհատուցման միջոցառումներ՝ որոշակի միջավայրը կամ տեսակների պոպուլյացիան պահպանելու նպատակով:

Յուրաքանչյուր «Նատուրա 2000» տարածք ունի հատուկ կառավարման ծրագիր

«Նատուրա 2000»-ով սահմանված տարածքներից յուրաքանչյուրն ունի սեփական կառավարման ծրագիրը, որը ենթադրում է պահպանվող միջավայրերի ու տեսակների պահպանությանն ուղղված գործողություններ: Կառավարման նման ծրագրերը մշակվում են բնության պահպանության ոլորտի փորձագետների կողմից և հաստատվում կառավարության մարմինների կողմից (սովորաբար Բնապահպանության նախարարության կողմից):

«Նատուրա 2000» տարածքներից յուրաքանչյուրն ունի գործողությունների կառավարման սեփական ծրագիրը:

«Նատուրա 2000» տարածքների կառավարումը լավագույնս իրականացվում է առանձին «Նատուրա 2000» տարածքների կամ դրանց հարակից տարածքների սեփականատերերի և շահագրգիռ խմբերի հետ սերտ աշխատանքի միջոցով՝ տեսակների ու միջավայրերի պահպանությանն ուղղված ամենանպատակահարմար եղանակների շուրջ համաձայնության հասնելու նպատակով՝ միևնույն ժամանակ հարգելով տեղի սոցիալ-տնտեսական և մշակութային համատեքստը:

Պահպանվող տարածքներ, որոնք խթանում են տեղական տնտեսությունը

«Նատուրա 2000»-ի նպատակը կենսաբազմազանության և դրա բնության արժեքների պահպանությունն է: Այնուամենայնիվ, ցանցը չի բացառում մարդկային գործունեության տեսակները:

Պահպանվող տարածքի ստեղծումը (ազգային պարկ, պետական արգելոց և այլն) տեղական տնտեսությունների համար կարող է կարևոր հավելյալ արժեք լինել՝ զբոսաշրջիկներ գրավելու շնորհիվ, ինչից ստացվող եկամուտը կարող է ուղղվել աշխատատեղերին և ներդրումներին: Այնուամենայնիվ, զբոսաշրջային և ժամանցային գործունեությունը կարող է ճնշում գործադրել միջավայրերի ու այդ տարածքներում առկա տեսակների վրա, ինչպես նաև հանգեցնել տարբեր ժամանացային գործունեության տեսակների և տեղական պոպուլյացիաների միջև հակասությունների: Սա կարևոր մարտահրավեր է պահպանվող տարածքների կառավարիչների համար:

Պահպանվող տարածքի ստեղծումը կարող է կարևոր հավելյալ արժեք լինել տեղական տնտեսությունների համար:

Զբոսաշրջության հետևանքով առաջացած բացասական ազդեցությունների մեծ մասը տեղի է ունենում այն դեպքում, երբ այցերի տեսքով օգտագործման մակարդակը գերազանցում է տվյալ տարածքի՝ այդ օգտագործմանը դիմակայելու կարողությանը: Ազդեցությունները կարող են տարբեր լինել՝ հողի էրոզիայից մինչև բազմազան կամ զուգավորման շրջանում կենդանատեսակների խաթարում: Մյուս կողմից, կայուն զբոսաշրջային գործունեությունը կարող է դրական ազդեցություն ունենալ և հնարավորություններ ստեղծել տարածքների բարելավման և պատշաճ կառավարման համար:

Որոշ տարածքներում զբոսաշրջությունը կարող է սահմանափակվել տարածքի պատշաճ պահպանությունն ապահովելու նպատակով: Կարելի է կիրառել օրական այցելուների թվի սահմանափակում կամ տարածք այցելելու կարող են սահմանափակվել միայն ուղեկցորդով էքսկուրսիաների՝ բացառապես տարվա որոշակի ժամանակահատվածներում:

Տեղեկատվական աղբյուրներ`

Բնության և կենսաբազմազանության վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի Էջեր`
https://ec.europa.eu/environment/nature/natura2000/index_en.htm

Արևելյան հարևանության երկրներ`

<https://www.euneighbours.eu/en/east/stay-informed/projects/emerald-network-nature-protection-sites-phase-ii>

Միջավայրերի վերաբերյալ հրահանգի 6-րդ հոդվածի դրույթներ`

https://www.google.com/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&ved=2ahUKFwjqrmpP-pHyAhUysKQKHegUByoQFjAAegQIBhAD&url=https%3A%2F%2Fec.europa.eu%2Fenvironment%2Fnature%2Fnatura2000%2Fmanagement%2Fdocs%2Fart6%2FENart_6_guide_jun_2019.pdf&usg=AOvVaw2TUENc78AxzuiMh9quj6W0

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Ա. Բնության պահպանությունը Եվրոպական միությունում

Բնության պահպանությունը ԵՄ-ում հիմնվում է երկու հրահանգի վրա՝

- «Բնական միջավայրերի, վայրի կենդանական և բուսական աշխարհի պահպանության մասին» խորհրդի 1992թ.-ի մայիսի 21-ի թիվ 92/43/ԵՏՀ հրահանգ, այն է՝ **Միջավայրերի վերաբերյալ հրահանգ**


<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A01992L0043-20130701>

- «Վայրի թռչունների պահպանության մասին» Եվրոպական խորհրդարանի և խորհրդի՝ 2009 թ.-ի նոյեմբերի 30-ի թիվ 2009/147/ԵՆ հրահանգ, այն է՝ **Թռչունների վերաբերյալ հրահանգ**

<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02009L0147-20190626>

Բնության վերաբերյալ այս հրահանգները համարվում են ԵՄ-ի կենսաբազմազանության քաղաքականության անկյունաքարերը: Դրանցով նաև իրականացվում են «Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայի (Բեռնի կոնվենցիա), «Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին» կոնվենցիայի (Բոննի կոնվենցիա) և Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի վրա հիմնված միջազգային պարտավորությունները:

«Նատուրա 2000»-ը Բեռնի կոնվենցիայի ներքո հիմնված «Էմերալդ ցանցին» ուղղված ԵՄ ներդրումն է:



Պատկեր 1. «Նատուրա 2000»-ը ԵՄ գծապատկերում

Հրահանգները գրանցվելիք արդյունքների մասով պարտադիր բնույթ են կրում բոլոր ԵՄ անդամ պետությունների համար:

Դրանցով սահմանվում են նպատակներ, որոնք պետք է իրականացնեն բոլոր ԵՄ երկրները, այնուամենայնիվ, երկրներն իրենք են որոշում ինչ գործիքներ կիրառել: Ի տարբերություն կարգավորումների (ուղղակիորեն կիրառելի և իրավական ուժ ունեցող ակտեր)՝ հրահանգներն օժտված են ճկունությամբ: ԵՄ անդամ պետությունները հիմնականում հրահանգների դրույթները փոխադրում են իրենց օրենսդրական համակարգ: Փոխադրումը սովորաբար ենթադրում է գործող օրենսդրության փոփոխություններ՝ բնության պահպանության ազգային համակարգերի կիրառմամբ:

Բնության վերաբերյալ հրահանգների դրույթների մեկնաբանումը և ընթացակարգերի արդյունավետության վերազնահատումը իրականացվում են կիրարկմանը զուգահեռ: Եվրոպական հանձնաժողովը մշակում և թարմացնում է հրահանգների կիրարկման վերաբերյալ ուղեցույցները, ինչը, ի թիվս այլ գործոնների, հիմնվում է ԵՄ արդարադատության դատարանի վճիռների վրա: Անդամ պետությունների միջև գիտելիքների և հմտությունների փոխանակումը նույնպես կարևոր դերակատարություն ունի կիրարկման գործընթացում:

ԲՊՄՄ-ի կողմից մոտ 6000 եվրոպական տեսակների պահպանության կարգավիճակի վերաբերյալ վերջերս իրականացված գնահատումը ցույց տվեց, որ Եվրոպայի կենդանատեսակների մինչև 25 տոկոսը անհետացման վտանգի տակ է գտնվում:

Բնության վերաբերյալ հրահանգների հիմնական նպատակը հրահանգների հավելվածներում ներկայացված միջավայրերի և տեսակների **պահպանության բարենպաստ կարգավիճակ** ապահովելն է: Ազգային փոխադրման և կիրարկման գործընթացի հաջողությունը Հանձնաժողովի վերահսկողության ներքո է: «Նատուրա 2000» ցանցը համարվում է շարունակական աշխատանք, քանի որ «Նատուրա 2000» տարածքների վերաբերյալ ազգային ցանկերի բավարար լինելը կանոնավոր ձևով գնահատվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից: «Նատուրա 2000» տարածքների վերաբերյալ որոշ անդամ պետությունների ազգային ցանկերը մինչ օրս համարվում են ոչ բավարար:

Մոտարկման գործընթացի նպատակը ՀՀ օրենսդրության համապատասխանեցումն է ԵՄ իրավունքին: Այս դեպքում համապատասխանեցման պահանջները պակաս խիստ են, քան ԵՄ անդամ պետությունների կողմից իրականացվող փոխադրման դեպքում: Արդյունավետ մոտարկումը պահանջում է նաև կենտրոնացում կիրարկման ու կատարման վրա, ինչի նախապայմանը հասանելի ռեսուրսներն ու կարողություններն են: Փոխադրման կամ մոտարկման գործընթացի ժամանակ թույլատրվում է հրահանգների տարբեր ձևակերպումների, ինչպես նաև տվյալ երկրում ընդունված իրավական տերմինաբանության և փաստաթղթերի կազմման մեթոդների կիրառում:

Ստորև ներկայացված են բնության վերաբերյալ հրահանգների փոխադրման չեխական և ֆիննական օրինակները:

Տեղեկությունների աղբյուրներ՝

Եվրոպական հանձնաժողովի կայքը ԵՄ-ում բնությանն ու կենսաբազմազանությանն առնչվող օրենսդրության վերաբերյալ

https://ec.europa.eu/environment/nature/legislation/index_en.htm

«Նատուրա 2000»-ի դիտում

<https://natura2000.eea.europa.eu/>

«Էմերալդ ցանց»

<https://www.coe.int/en/web/bern-convention/emerald-network>

Բ. Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահանգների փոխադրումը Չեխիայի Հանրապետությունում

2004թ.-ին Եվրոպական միությանը Չեխիայի Հանրապետության անդամակցմանը նախորդել են հրահանգների՝ չեխական օրենսդրություն փոխադրման հետ կապված տարիների նախապատրաստական աշխատանքներ: «Նատուրա 2000» տարածքների հիմնման նպատակով Չեխիայի Հանրապետությունը իրականացրել է **միջավայրերի և տեսակների մշտադիտարկման ծավալուն քարտեզագրում**: Չեխիան շարունակում է այդ ուղղությամբ ջանքեր ներդնել՝ տասներկուամյա ցիկլով տեսակների կանոնավոր մշտադիտարկում և Չեխիայի տարածքի քարտեզագրում իրականացնելով: Տեղեկությունները պահպանվում են Աշխարհագրական տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարանում որպես «միջավայրերի քարտեզագրման շերտ», որը թարմացվում է տարեկան կտրվածքով՝ քարտեզագրման ցիկլի ընթացքին զուգահեռ:



Պատկեր 2. Միջավայրի քարտեզագրման շերտի օրինակ

«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» թիվ 114/1992 Coll. ակտը Չեխիայի Հանրապետությունում առանցքային ակտ է: Սա այն հիմնական օրենքն է, որի միջոցով հարահանգները փոխադրվում են Չեխիայի ազգային օերնսդրություն:

«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտը, ի թիվս այլևի, ներառում է հետևյալը.


- **Բնության և լանդշաֆտների ընդհանուր պահպանություն**՝ լանդշաֆտի պահպանություն (օր.՝ «Էկոլոգիական կայունության ցամաքային համակարգի» միջոցով, որը ներառում է Էկոլոգիական միջանցքներ և կենսակենտրոններ՝ այսպես կոչված «կանաչ ենթակառուցվածքի» ստեղծում, «նշանակալի լանդշաֆտային տարրերի» և հատկանիշների պաշտպանություն, առանձին ծառերի պահպանություն և այլն), տեսակների ընդհանուր պահպանություն (մասնավորապես, ընդգրկում է բոլոր բուսատեսակների և կենդանատեսակների պահպանության ընդհանուր երաշխիքներ ոչնչացումից և վնասումից, արգելվում է այն տեսակների հավաքումը կամ որսը, որը կարող է հանգեցնել դրանց անհետացման վտանգի առաջացմանը, պոպուլյացիայի անհետացմանը կամ այլ նույնչափ վնասակար հետևանքների).
- **Բնության և լանդշաֆտների հատուկ պահպանություն**՝ հատուկ պահպանվող տարածքներ (6 կատեգորիա), տեսակների հատուկ պահպանություն (Շրջակա միջավայրի Նախարարության թիվ 395/1992 Coll. որոշման մեջ նշված ընտրված հազվագյուտ տեսակներ, 3 կատեգորիայի բաժանված պահպանության ռեժիմ վտանգված, խիստ վտանգված և անհետացման եզրին գտնվող տեսակներ).
- **«Նատուրա 2000» պահպանություն**՝ Համայնքային նշանակության տարածքների և Թշնատեսակների հատուկ պահպանվող տարածքների հիմնում և պահպանություն (տե՛ս ստորև):

Այս ակտի բաղկացուցիչ մասը նաև բնության պահպանության ոլորտի մարմինների, դրանց իրավասությունների տարածքային շրջանակի ու պարտականությունների սահմանումն է: Չեխիայի Հանրապետությունում բնության պահպանության շրջանակը բավական բարդ է, և առանձին իրավասություններն նկարագրված են անմիջականորեն «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում: Բնության հատուկ պահպանությանը և «Նատուրա 2000»-ին առնչվող համապատասխան մարմինները ներառում են հետևյալը՝

Շրջակա միջավայրի նախարարությունը հիերարխիայի ամենաբարձր հատվածում է և ստանձնում է «քաղաքականություն մշակողի և համակարգողի» դեր:

Դրանից գատ, կա կառավարումից մինչև վարչական վարույթներով և որոշումների կայացմամբ զբաղվող 4 մարմին (վերջիններիս իրավասությունը հիմնվում է համապատասխան տարածքի տեղակայվածության վրա): **Ազգային պարկերի վարչակազմ** (մեկ անկախ մարմին՝ յուրաքանչյուր ազգային պարկի համար), **Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալություն** (14 մարզային մասնաճյուղ, որոնք պատասխանատու են Պահպանվող լանդշաֆտային տարածքների և ազգային նշանակության փոքր պահպանվող տարածքների համար, ունեն Չեխիայի Հանրապետության ողջ տարածքում միջավայրերի և տեսակների մշտադիտարկում իրականացնելու հատուկ պարտավորություն), **մարզային մարմիններ** (14 մարզային (kraj) մարմին՝ Ազգային պարկերի վարչակազմերի և Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության շրջանակներից դուրս գտնվող տարածքների պահպանություն) և **Չինվորական պատրաստության գոտիների մարմիններ** (4 առանձին վարչակազմ՝ զինվորական պատրաստության գոտիներում):

Հատուկ դերակատարություն ունի **Չեխիայի բնապահպանության տեսչական մարմինը**, որը պատասխանատու է շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության կիրարկման համար:



Պատկեր 3. Չեխիայի Հանրապետությունում բնության պահպանության ինստիտուցիոնալ կառուցվածքը

Չնայած ընդհանուր դրույթները կարող են խիստ թվալ, Ակտը ներառում է փոխատուցումների և օրենքով սահմանված արգելքներից շեղումների համակարգ և ընթացակարգ: Ինչ վերաբերում է օրենքից շեղումներին, նշենք, որ շեղումները կիրառել ցանկացող անձը պետք է բնության պահպանության ոլորտի համապատասխան մարմին թույլտվություն ստանալու դիմում ներկայացնի: Ինքնին ընդհանուր ընթացակարգը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

Քանի որ «Նատուրա 2000» տարածքները և ԲՀՊՏ-ները սահմանվում են անկախ հողի սեփականությանն առնչվող հարցերից, սեփականատերերի և վարձակալների համար գործում է **փոխհատուցումների համակարգ**: Գործում են **սահմանափակումների հետ կապված փոխհատուցումներ**, որոնք բխում են գյուղատնտեսական արտադրությունում (այդ թվում՝ ձկնաբուծարաններում) կամ անտառային տնտեսություններում (օրինակ՝ տարվա ավելի ուշ սեզոնին խոտհունձ կատարելը՝ պահպանվող բուսատեսակների ծաղկումն ապահովելու նպատակով, թունաքիմիկատներ և արդյունաբերական պարարտանյութեր չկիրառելը և այլն) իրականացվող բնության պահպանության միջոցառումներից, ինչպես նաև կան հատուկ պահպանվող տարածքների հիմնման արդյունքում (օրինակ՝ գայլերի հարձակումները ոչխարի հոտերի վրա) պատճառվող **վնասների փոխհատուցումներ**: Պետական մարմինները ֆինանսական աջակցություն են ցուցաբերում այնպիսի պրոակտիվ միջոցառումների համար, ինչպիսիք են խոշոր գիշատիչներից գյուղատնտեսական կենդանիներին պաշտպանելու նպատակով ավելի ամուր ցանկապատերի կառուցումը, հովվաշների ձեռքբերումը, բնական ջրավազանների կառուցումը, գետերի կամ առուների վերակենդանացումը և այլն:

Բնության վերաբերյալ հրահանգների փոխադրման համատեքստում «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում ներառվել է «Նատուրա 2000» գլուխը, որով սահմանվում են «Նատուրա 2000» տարածքները և ներկայացվում պահպանությանն ուղղված նոր միջոցառումներ, այդ թվում՝ «Նատուրա 2000» տարածքների վրա հավանական ազդեցություն ունեցող ծրագրերի և նախագծերի պատշաճ գնահատումը: Այնուամենայնիվ, նաև փոփոխվել են Ակտի այլ հատվածներ և կիրառվել հասանելի գործիքներ (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

- Թռչնատեսակների ընդհանուր պահպանությունը ներառվել է կենդանատեսակների ընդհանուր պահպանությանը վերաբերող հատվածում:
- Տեսակների պահպանության խիստ ռեժիմը վերանայվել է՝ Միջավայրերի վերաբերյալ հրահանգի 3-րդ հավելվածում ներառված տեսակներն ընդգրկելու նպատակով:
- Բոլոր «Նատուրա 2000» տարածքները հիմնական պահպանության ռեժիմի ներքո են, որով արգելվում են դրանց վնասմանը հանգեցնող գործողություններ, սակայն անհրաժեշտության դեպքում կիրառվում է պահպանվող տարածքի ազգային կատեգորիան՝ «Նատուրա 2000» տարածքը (կամ դրա որևէ հատվածը) պահպանության միջոցառումներում ընդգրկելու համար:

Ազգային պահպանվող տարածքները (Զեխիայի տարածքի 16.8 տոկոսը) և «Նատուրա 2000» համակարգը (Զեխիայի տարածքի 14.1 տոկոսը) տարածքային առումով փոխլրացնում են կամ ուղղակիորեն համընկնում են միմյանց: Պահպանվող տարածքների և «Նատուրա 2000» համակարգի համընկնումը երեք քառորդից ավելի է: Պահպանվող տարածքները սահմանող իրավական ակտերում և պահպանվող տարածքների կառավարման ծրագրերում հիմնականում ճանաչվում են «Նատուրա 2000» համակարգի պահպանության օբյեկտները, և պահպանության անհրաժեշտ միջոցառումները որոշվում են ըստ պահպանվող տարածքների: Այսպիսով, «Նատուրա 2000»-ը և պահպանվող տարածքները կազմում են Զեխիայի Հանրապետության բնության պահպանվող տարածքների մեկ համապարփակ համակարգ, **որն ընդգրկում է պետության տարածքի 22.1 տոկոսը**:



Պատկեր 4. «Նատուրա 2000» և այլ պահպանվող տարածքներ Զեխիայի Հանրապետությունում

Փոխադրման գործընթացը ներառել է առաջնային և երկրորդային օրենսդրության հետագա փոփոխություններ, մասնավորապես հետևյալը՝

Առաջնային օրենսդրություն

- «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» թիվ 114/1992 Coll. ակտ
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» թիվ 100/2001 Coll. ակտ
- «Որսատեսակներին առնչվող հարցերի կառավարման մասին» թիվ 449/2001, Coll. ակտ
- «Հատուկ պահպանվող տարածքների հիմնման արդյունքում պատճառվող վնասների փոխհատուցման մասին» թիվ 115/2000 Coll. ակտ

Երկրորդային օրենսդրություն

- «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի որոշ դրույթների փոխադրման վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարության թիվ 395/1992 Coll. որոշում (ներառում է հատուկ պահպանվող տեսակների ցանկ՝ երեք կատեգորիայով)
- «Համայնքային նշանակության տարածքների ազգային ցանկի մասին» Կառավարության թիվ 318/2013 Coll. որոշում
- Թռչնատեսակների համար հատուկ պահպանվող տարածքներ (յուր. տարածքի համար՝ առանձին) հիմնելու վերաբերյալ Կառավարության որոշումներ
- «Առանձին որսատեսակների որսի սեզոնների և որսորդության մանրամասն պայմանների մասին» Գյուղատնտեսության նախարարության թիվ 245/2002 Coll. որոշում
- «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի՝ «Նատուրա 2000» տարածքներ հիմնելուն առնչվող որոշ դրույթների փոխադրման վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարության թիվ 166/2005 Coll. որոշում
- Բնության հատուկ պահպանվող տարածքներ հիմնելու նպատակով տեսակների և թռչունների թվաքանակ սահմանող՝ Կառավարության թիվ 51/2005 Coll. որոշում

Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահանգների միջամտությունների տրամաբանությունը և փոխադրումը Չեխիայի Հանրապետությունում

Հատուկ նպատակներ	Գործողություններ	Փոխադրումը Չեխիայում
Ա. Ապահովել մենարժեքավոր տարածքների կառավարումն ու պահպանությունը, ինչպես նաև մեկ ամբողջություն կազմելը	Ա1 Սահմանել «Նատուրա 2000» Համայնքային նշանակության տարածքներ և ԲՀՊՏ-ներ	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Ներկայացվել են պահպանվող տարածքների նոր կատեգորիաներ (Համայնքային նշանակության տարածքներ (ՀՆՏ) և ԲՀՊՏ-ներ)</i>
	Ա2 Հիմնել Պահպանության հատուկ տարածքներ (ՊՀՏ)	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Պահպանության միջոցառումների սահմանում (իրավական պաշտպանություն, կառավարման ծրագիր)</i>

	Ա3	Սահմանել յուրժ «Նատուրա 2000» տարածքի համար անհրաժեշտ պահպանության միջոցառումներ և իրականացնել դրանք	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Իրավական միջոցառումներ՝ տարածքների ընդհանուր պահպանություն, տարածքների՝ որպես պահպանվող տարածքների պահպանություն, պայմանագրեր սեփականատերերի հետ, պահպանության հատուկ ռեժիմ առանձին ԲՀՊՏ-ների համար՝ ուղղված թռչնատեսակների և առնչվող կառավարման միջոցառումների իրականացմանը (պահպանությանն ուղղված միջոցառումների խումբ, օրժ՝ կառավարման ծրագիր «Նատուրա 2000» տարածքի համար)</i>
	Ա4	Կանխել միջավայրերի վատթարացումն ու տեսակների խաթարումը	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Սույն ակտով ՀՆՏ-երի և ԲՀՊՏ-ների վերաբերյալ թույլտվություն, համաձայնություն, դրական եզրակացություն կամ արգելից ազատում կարող է շնորհվել բնության պահպանության ոլորտի մարմնի կողմից միայն այն դեպքում, երբ բացառվում է լուրջ կամ անդամնալի վնասը թիրախային միջավայրերին կամ տեսակների միջավայրերին, ինչպես նաև թիրախային տեսակների կանոնավոր կամ երկարաժամկետ խաթարումը, եթե վերջինս կարող է զգալի լինել:</i>
	Ա5	Չնահատել ծրագրերը (սահագծերը)՝ տարածքների վրա բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Ներկայացվել է պատշաճ գնահատման ընթացակարգ (և մշակվել է երկրորդային օրենսդրություն)</i> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» թիվ 100/2001 Coll. ակտի փոփոխություն
Բ	Բ1	Կառավարել «Նատուրա 2000»-ի շրջանակից դուրս անդաճափների	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում արդեն իսկ ներառված՝ բնության և լանդշաֆտի ընդհանուր պահպանություն
	Բ2	Կառավարել/վերականգնել «Նատուրա 2000»-ի շրջանակից դուրս միջավայրերը	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում արդեն իսկ ներառված՝ բնության և լանդշաֆտի ընդհանուր պահպանություն
Գ	Գ1	Սահմանել տեսակների պահպանության խիստ համակարգեր	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում հատուկ պահպանվող տեսակների ցանկի ու պահպանության ռեժիմի փոփոխություն
	Գ2	Սահմանել որսորդության և առևտրի պատշաճ կարգավորումներ	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտում հատուկ պահպանվող տեսակների փոփոխություն «Որսատեսակների կառավարման մասին» թիվ 449/2001, Coll. ակտի և երկրորդային օրենսդրության փոփոխություն <i>Պահպանվող տեսակները հանվել են որսի համար թույլատրվող կենդանատեսակների ցանկից, վերանայվել են որսի սեզոնները:</i>
	Գ3	Վերահսկել ոչ տեղական տեսակները՝ բնիկ միջավայրերն ու տեսակները պահպանելու նպատակով	Բնության և լանդշաֆտի ընդհանուր պահպանություն <i>Աշխարհագրորեն ոչ բնիկ տեսակների ներկայացում և տարածում միայն բնության պահպանության ոլորտի մարմնի թույլտվությամբ</i> Կառավարման ակտիվ հսկողությունը, որպես այդպիսին, գործնականում կիրառվող օրենքում դեռևս ներառված չէ. ինվազիվ՝ օտարածին բուսական տեսակների կանոնակարգում և վերացում:

Դ	Ապահովել մապատասխան գիտելիքներ, տվյալների հասանելիություն ու զեկվածություն	Դ1	Մշտադիտարկել տեսակներն ու միջավայրերը և ներկայացնել հաշվետվություններ	«Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» ակտի նոր «Նատուրա 2000» գլուխ <i>Բնության պահպանության ոլորտի մարմինները պարտավոր են մշտադիտարկել տեսակները, միջավայրերն ու տարածքները՝ ապահովելով Եվրոպական հանձնաժողովի առջև ստանձնած՝ հաշվետվությունների ներկայացման պարտավորությունների իրականացումը:</i>
		Դ2	Իրականացնել միջավայրերի և տեսակների հետազոտություն	Որպես այդպիսին, գործնականում կիրառվող օրենքում ներառված չէ:
		Դ3	Միջավայրերի և տեսակների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում	Որպես այդպիսին, գործնականում կիրառվող օրենքում ներառված չէ:

Գ. Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահանգների փոխադրումը Ֆինլանդիայում

Ֆինլանդիայում փոխադրման գործընթացը նման է վերևում նկարագրված Չեխիայի Հանրապետության փորձին: Ստորև քննարկվում են ֆիննական գործընթացի վերաբերյալ կոնկրետ տեղեկատվությունն ու թեմաները:

Ֆինլանդիան անդամակցել է Եվրոպական միությանը 1995թ.-ին: Անդամակցությունը ենթադրում էր անհապաղ սկսել «ՆԱՏՈՒՐԱ 2000» ցանցի մշակումը և թռչունների ու միջավայրերի վերաբերյալ հրահանգների կիրարկումը:

Ֆինլանդիայի տարածքների մեծամասնությունը պատկանում է Բորեալ կենսաաշխարհագրական շրջանին (BOR), սակայն երկրի ամենահյուսիսային հատվածները ներառված են Ալպիական շրջանի (ALP) մեջ: Դրանից բացի, Բալթիկ ծովի տարածքներն ընդգրկված են BAL առանձին տարածքում:

Մինչ այժմ Ֆինլանդիան **սահմանել է 1866 «Նատուրա 2000» տարածքներ**, որոնք ընդհանուր ներառում են մոտ 5 միլիոն հեկտար: **Տարածքների 75 տոկոսը ցամաքային են, իսկ մնացած 25 տոկոսը՝ ծովային և լճային:** Այդ տարածքներից 87-ը հիմնվել են Ալանոյան կղզիներում (ինքնավար տարածք): Տարածքներից 1721-ը սահմանվել են «որպես պահպանության հատուկ տարածքներ» (ՊՀՏ): Դրանք ներառում են մոտ 4.8 միլիոն հա, որը Ֆինլանդիայի ողջ տարածքի 12,4 տոկոսն է: Թռչունների վերաբերյալ հրահանգի պահանջները կատարելու նպատակով հիմնվել են ընդհանուր 470 ԲՀՊՏ-ներ: ԲՊՀՏ-ները ներառում են 3,19 միլիոն հա (երկրի 8,2 տոկոսը): Որոշ ՊՀՏ-ներ և ԲՀՊՏ-ներ միմյանց համընկնում են:

Ֆինլանդիայում բավարար թվով ԲՀՊՏ-ներ և ՀՆՏ-ներ առաջարկելու գործընթացը երկարատև է եղել: Սակայն ԵՄ-ին անդամակցելուց շատ տարիներ անց՝ 2015թ-ի ապրիլի 17-ին (354/2015), ՊՀՏ-ները իրավական ուժի մեջ մտան՝ Բնապահպանության նախարարության 2015թ.-ի մարտի 24-ի որոշմամբ:

Դրանից բացի, Ֆինլանդիայի կառավարությունը հետագայում Եվրոպական հանձնաժողովին առաջարկեց երեք տարածքների ընդլայնում: Նոր տարածքներն ընդհանուր առմամբ ընդգրկում են 113 500 հա՝ հիմնականում հանդիսանալով արշիպելագում թափուների համար կարևոր տարածքներ: Այս փոփոխություններից հետո **ամբողջ «ՆԱՏՈՒՐԱ 2000» ցանցն ընդգրկում է 5,07 մլն հա, որը Ֆինլանդիայի ազգային տարածքի մոտ 13 տոկոսն է:** Տարածքների մոտ 80 տոկոսը պատկանում են պետությանը:


Նախքան ԵՄ-ին անդամակցելը Ֆինլանդիան արդեն իսկ իրականացրել էր Ֆինլանդիայի խորհրդարանի կողմից հաստատված՝ պահպանությանն ուղղված մի քանի խոշոր ազգային ծրագրեր: Դրանք նպատակաուղղված էին միջավայրերի որոշակի տեսակների կամ վտանգված տեսակների բնակության տեղանքների պահպանությանը: Հետագայում, այդ տարածքներից շատերը ներառվել են «Նատուրա 2000» ցանցի մեջ: **«Նատուրա 2000» տարածքների մոտ 85 տոկոսն ընտրվել են նախկինում ազգային մակարդակով պահպանվող տարածքների շրջանակից:**

«Նատուրա 2000» ցանցից դուրս պահպանվող տարածքներն ընդգրկում են 400 000 հա (4 000 կմ²) ընդհանուր տարածք և ներառում պետության և մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող տարածքներ, որոնք հիմնվել էին բնության պահպանության սկզբնական ազգային ծրագրերից դուրս կամ 1992թ.ի «Նատուրա 2000» առաջին տարածքների առաջարկից հետո: Ազգային մակարդակով սահմանված այս մակերեսի մոտավորապես կեսը ծովային տարածք է, որտեղ համայնքային արժեք համարվող միջավայրերն ու տեսակները դեռևս համապարփակ ձևով չէին ուսումնասիրվել այն ժամանակ, երբ առաջին անգամ ուշ 1990-ականներին տարածքներն առաջարկվում էին «Նատուրա 2000» ցանցի համար, և այսպիսով դրանք դուրս էին մնացել: Այդ ժամանակից ի վեր, լայնածավալ ստորջրյա գույքագրումներից հետո «Նատուրա 2000» ծովային տարածքները մի քանի անգամ լրացվել են (վերջին լրացումներն արվել են 2012 և 2018թթ.-ին) Եվրոպական հանձնաժողովի կողմից: Այսպիսով, վերջերս սահմանված կամ ընդլայնված ազգային պարկերում ներառվել են բավական խոշոր ծովային տարածքներ (օր.՝ «Բուտնիկ ծով» և «Արշիպելագի ծով» ազգային պարկերը):

Բնության պահպանության նոր ազգային ծրագրերը նույնպես իրականացվել են անցյալ տասնամյակում՝ մասնավորապես նպատակաուղղված լինելով Հարավային Ֆինլանդիայի անտառների ու տորֆաճահիճների պահպանությանն ու վերականգնմանը: Որպես Անտառային կենսաբազմազանության METSO ծրագրի (2008–2025թթ.) և 2014–2015թթ.-ի Տորֆաճահիճների պահպանության լրացուցիչ ծրագրի մաս՝ պետությանը պատկանող հողերում գտնվող պահպանվող տարածքների ցանցը կանոնավոր կերպով ընդլայնվել է ավելի քանի 50 000 հա-ով՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգի վրա հիմնված՝ գոտիավորման պահպանության, առաջնահերթությունների որոշման ծրագրաշարով իրականացվող վերլուծության միջոցով:

Ըստ ազգային օրենսդրության՝ «ՆԱՏՈՒՐԱ 2000» տարածքները պետք է պահպանվեն այնպիսի եղանակով, որ ապաստան դառնան այն տեսակների ու միջավայրերի համար, որոնց համար հիմնվել են: Այդ պահպանությունը կարող է բխել «Բնության պահպանության մասին», «Վայրի բնության տարածքների մասին», «Հողի և հողօգտագործման մասին», «Առուների և գետերի պահպանության մասին» և «Անտառաբուծության մասին» օրենքներից:

«Նատուրա 2000» տարածքի պահպանության կիրառումը սահմանափակելու հրատապ անհրաժեշտության դեպքում ամենայն հավանականությամբ կկիրարկվի օրենքը՝ տարածքում առկա արժեքները պահպանելու նպատակով: Այնպիսի դեպքերում, երբ «Նատուրա 2000» տարածքը հիմնվում է **մասնավոր հողում, հողի սեփականատերը ֆինանսական փոխհատուցում է ստանում:**



Պատկեր 5. «ՆԱՏՈՒՐԱ 2000» տարածքները Ֆինլանդիայում

Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահագին առնչվող վերջին գործողությունները

Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահագին առնչվող վերջին գործողությունները սերտորեն կապված են ԱԳՇ ազգային գործունեության հետ (**«ՆԱՏՈՒՐԱ 2000»-ի համար առաջնահերթ գործողությունների շրջանակ** (ԱԳՇ) Ֆինլանդիայում, այդ թվում Ալանոյան շրջանում): Եվրոպական հանձնաժողովը հորդորեց անդամ պետություններին մինչև 2020թ.-ի ավարտը վերջնականացնել իրենց ԱԳՇ-ն, և գնահատման գործընթացից հետո՝ 2021թ.-ի գարնանը, փաստաթղթերը պատրաստ էին:

Ներկայում Հանձնաժողովը առաջարկում է անդամ պետություններում գործընթացի գործադիր մասին աջակցելուն ուղղված մի քանի ֆինանսական գործիք: Ֆինլանդիայի դեպքում սա նշանակում է բացառիկ ծավալուն «ռազմավարական LIFE նախագծի» մշակում: Հիմնական գաղափարը այնպիսի նախագիծ մշակելն է, որը 1) ընդգրկում է ԵՄ Կենսաբազմազանության ռազմավարության հիմնական պահանջները, 2) խթանում է ԱԳՇ-ի կիրարկումը, և 3) աջակցություն է տրամադրում կենսաբազմազանության ազգային ռազմավարություն մշակելու և կիրարկելու համար: Այս աշխատանքը պահանջում է բնության պահպանության ոլորտում դերակատարություն ունեցող բոլոր մարմինների մասնակցությունը:

Եվրոպական հանձնաժողովը շարունակաբար իր առարկությունն է արտահայտել անդամ պետություններում Թռչունների և միջավայրերի վերաբերյալ հրահանգի ոչ բավարար կիրարկման դեպքերի առնչությամբ: Ֆինլանդիան տարիներ շարունակ բարելավել է հրահանգների պահանջների կիրարկումը, սակայն դեռևս կան փոքր հարցեր, որոնք լրացուցիչ պարզաբանումների կարիք ունեն:

Վերջերս տեղի ունեցող քննարկումներից շատերը կենտրոնացել են որոշակի տարածքի համար սահմանված պահպանության նպատակների և միջոցառումների կամ պատշաճ սահմանումների բացակայության վրա: Մյուս շարունակական և ժամանակատար գործընթացը Եվրոպայան հանձնաժողով պահպանվող տեսակների և միջավայրերի պահպանության կարգավիճակի մասին հաշվետվություններ ներկայացնելու համար Տվյալների ստանդարտ ձևաթղթերի (SU2) թարմացումն է:

«Նատուրա 2000» ցանցի կատարողականի բարելավում՝ հետևողականությունն ու փոխկապակցվածությունը խթանող «Կանաչ ենթակառուցվածք»

Միջավայրերի վերաբերյալ հրահանգը (10-րդ հոդված) թիրախներ է սահմանում «Նատուրա 2000» ցանցի հետևողականության և փոխկապակցվածության համար: Ֆինլանդիայում տարածքներն ու դրանց պահպանության նպատակները ընդգծված կերպով աջակցություն են ստանում ազգային պահպանվող տարածքների և ցանցից դուրս գտնվող տարածքների վրա հիմնված պահպանության այլ արդյունավետ միջոցառումների (OECMs) միջոցով: Ֆինլանդիայում ներկայում դեռևս շարունակվում են OECM-երի սահմանման աշխատանքները: **Տարածքների վրա հիմնված պահպանության այլ արդյունավետ միջոցառումների** գաղափարն ընդունվել է 2018թ.-ին Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի համաժողովի կողմից:

Ըստ ազգային ԱԳՇ-ի՝ սահմանվել են գյուղատնտեսական և անտառային շրջակա միջավայրերում գտնվող մի քանի OECM տարածքների տեսակներ և քննարկումներ են իրականացվում ծովային միջավայրերում հնարավոր տարածքների տեսակների վերաբերյալ, օր.՝ ձկնորսության և նավարկության սահմանափակումներով տարածքներ, որոնք ուղղված են ձկների ձվադրման տարածքների և միգրացիոն ուղիների պաշտպանությանը:

ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չեխիայի Հանրապետությունն իր աշխարհագրական դիրքի, բնական պայմանների բազմազանության, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մասերի մշակութային-պատմական զարգացումների շնորհիվ բնութագրվում է հարուստ բուսականությամբ (այդ թվում՝ սնկեր, մամուռներ, քարաքոսեր), կենդանական աշխարհով և համայնքներով: Ընդհանուր առմամբ, երկրում հայտնաբերվել է անոթային բույսերի 2700-ից ավելի տեսակ, ոչ անոթային բույսերի 2400 տեսակ, անողնաշարավորների 50 000 տեսակ, ինչպես նաև ողնաշարավորների 380 տեսակ: Ըստ ներկայիս ազգային կարմիր ցուցակների, որոնք արտացոլում են տեսակների վտանգվածության աստիճանը, կաթնասունների 16%-ը, բնադրող թռչունների 45%-ը, սողունների 58%-ը, երկկենցաղների 76%-ը, ձկների 42%-ը, անոթային բույսերի 40%-ը և ոչ անոթային բույսերի 43%-ը վտանգված են Չեխիայի Հանրապետությունում: Բույսերի և կենդանիների, այդ թվում՝ միջավայրերի արդյունավետ պահպանությունը տեսակների մակարդակով կենսաբազմազանության պահպանությունն ապահովելու նախապայմանն է: Չեխիայի Հանրապետությունում այդ պահպանությունն ամրագրված է գլխավորապես «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» թիվ 114/1992 Coll. ակտով: Այս ակտով սահմանվում է բույսերի և կենդանիների տեսակների պահպանությանն ուղղված մի շարք գործիքներ: Դրանով նախատեսվում է բոլոր բուսատեսակների և կենդանատեսակների ընդհանուր պահպանություն, առանձին վայրի թռչունների պահպանություն, ինչպես նաև հազվագյուտ ու մշակութային տեսանկյունից կարևոր բուսատեսակների և կենդանատեսակների հատուկ պահպանություն: Ծառերի և հիշատակի ծառերի պահպանությունը նույնպես ներառված է ակտում:

Այսպես կոչված «տարածաշրջանային պահպանության» մեջ ներառված գործիքները նաև նպաստում են տեսակների և ամենակարևորը՝ դրանց միջավայրերի պահպանությանը ընդհանուր (Եկոլոգիական կայունության տարածաշրջանային համակարգ, կարևոր լանդշաֆտների տարրեր) և հատուկ (հատուկ պահպանվող տարածքներ) մակարդակներում: Բույսերի, կենդանիների և դրանց միջավայրերի պահպանությունը ԵՄ հրահանգների («Վայրի թռչունների պահպանության մասին»՝ 1979/409/ԵՏՀ հրահանգ և «Բնական միջավայրերի, վայրի կենդանական ու բուսական աշխարհի պահպանության մասին»՝ 1992/43/ԵՏՀ հրահանգ), ինչպես նաև դրանց հիմքով մշակված «Նատուրա 2000» համակարգի (ներառում է բնության հատուկ պահպանվող տարածքներ և պահպանության հատուկ տարածքներ) հիմնական նպատակներից է:

Տեսակների պահպանություն

Ժամանակակից բնության պահպանության կարևորագույն տարրերից մեկը Չեխիայի Հանրապետությունում հանդիպող բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն է: «Բնության և լանդշաֆտի պահպանության մասին» թիվ 114/1992 ակտով տարբերակվում է տեսակների պահպանության նկատմամբ երկու մոտեցում՝ ընդհանուր և հատուկ պահպանություն:

Տեսակների ընդհանուր պահպանություն

Ընդհանուր պահպանությունը ենթադրում է բոլոր բուսատեսակների և կենդանատեսակների պաշտպանությունը ոչնչացումից, վնասումից, հավաքումից կամ որսալուց, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել այդ տեսակների գոյության վտանգմանը կամ վատթարացմանը, այդ տեսակների վերարտադրողական կարողության խախտմանը, դրանց պոպուլյացիաների վերացմանը կամ այն Էկոհամակարգի ոչնչացմանը, որի մաս են կազմում այդ տեսակները: Խաչասերված բույսերի կամ կենդանիների, ինչպես նաև ոչ տեղական տեսակների միտումնավոր բացթողումը լանդշաֆտներում հնարավոր է միայն բնության պահպանության ոլորտի մարմինների թույլտվության պարագայում, քանզի որոշ բնիկ բույսեր կարող են վտանգվել այլ ոչ բնիկ (ինվազիվ) տեսակների պատճառով:

Թռչունները հատուկ տեղ են գրավում ընդհանուր պահպանության մեջ, որի պատճառը ԵՄ օրենսդրությունն է («Վայրի թռչունների պահպանության մասին» 79/409/ԵՏՀ հրահանգ)։ Ընդհանուր պահպանությունը կենտրոնացած է տեսակների բոլոր պոպուլյացիաների վրա, իսկ թռչունների ընդհանուր պահպանությունը վերաբերում է ԵՄ տարածքում հանդիպող վայրի թռչունների խմբերի յուրաքանչյուր առանձնյակին: Հետևյալ գործողությունները արգելվում են՝ միտումնավոր սպանող, հավաքում կամ որս, դրանց բների կամ ձվերի միտումնավոր վնասումը, ոչնչացումը կամ դրանք վերցնելը, հատկապես բազմացման շրջանում թռչուններին միտումնավոր անհագնստացնելը (բացառությամբ որոշակի թռչնատեսակների, և գործողությունների, որոնք իրականացվում են սույն ակտին ու որսին վերաբերող այլ կարգավորումներին համապատասխան): Ընդհանուր պաշտպանության նման ընդլայնումը, որը ուժի մեջ է մտել 2004թ-ի ապրիլին, վայրի թռչունների բոլոր առանձնյակների պաշտպանության առանցքային գործիք է:

Տեսակների հատուկ պահպանություն

Չեխիայի Հանրապետությունում հազվագյուտ, վտանգված կամ մշակութային, գիտական տեսանկյունից կարևոր բուսատեսակներն ու կենդանատեսակները ներառվում են «հատուկ պահպանվող տեսակներ» կատեգորիայի մեջ, որի դեպքում պահպանության ռեժիմն ավելի խիստ է: Ավելին, ըստ պաշտպանության կարիքի և կիրառվող միջոցառումների խստության՝ դրանք բաժանվում են ևս երեք կատեգորիայի. այդ տեսակների ցանկը թիվ 395/1992 կարգավորման մաս է կազմում: Այդ ցանկը տարբերվում է Կարմիր ցուցակից, որը հիմնվում է միայն գիտական գիտելիքների վրա և որևէ իրավական կարգավիճակ չունի: Ի հակադրություն ընդհանուր պահպանության՝ տեսակները պահպանվում են զարգացման բոլոր փուլերում: Բացի այդ՝ արգելվում է հավաքել, միտումնավոր սպանել, բռնել կամ առևտրային նպատակներով օգտագործել հատուկ պահպանվող կենդանիներ և բույսեր: Կենսատույերի (հատուկ պահպանվող տեսակների միջավայրը՝ որպես գոյության տարրական պայման) պահպանությունը տեսակների հատուկ պահպանության կարևոր գործիք է: Տեսակների հատուկ պահպանությամբ սահմանված արգելքներից շեղումներ կարող են թույլատրվել որոշակի դեպքերում (օր.՝ հանրային առողջության շահերից կամ անվտանգության նկատառումներից ելնելով, օդային անվտանգության նպատակներով, լուրջ վնասները կանխելու համար):

Տեսակների վերաբերալ գործողությունների ծրագրեր

Կենդանատեսակների և բուսատեսակների վերաբերալ գործողությունների ծրագրերը իրականացվում են ոչնչացման վտանգի տակ գտնվող տեսակների համար՝ այնպիսի համապարփակ միջոցառումների փաթեթի տեսքով, ինչի արդյունքում վերացվում կամ նվազեցվում են սպառնալիք ներկայացնող հայտնի գործոնները և բարելավվում են այդ տեսակների կյանքի պայմանները: Գործողությունների ծրագրերը համարվում են ժամանակավոր ծրագրեր, որոնց նպատակը տվյալ տեսակի պոպուլյացիայի աճն ապահովելն է՝ չեզոքացնելով դրա անհետացման սպառնալիքը տարատեսակ միջոցառումների իրականացման միջոցով:

Տեսակների կառավարման ծրագրերը նույնատիպ ռազմավարական փաստաթղթեր են, որոնք մշակվում են այնպիսի պակաս վտանգված տեսակների համար, որոնք պահպանության

կարգավիճակի փոփոխության վտանգի տակ են գտնվում, կամ այնպիսի տեսակների համար, որոնց դեպքում պահանջվում է համապարփակ և համակարգված մոտեցում դրանց սոցիալ-տնտեսական ազդեցությունների պատճառով:

Տեսակների վերաբերյալ գործողությունների ծրագրերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հղումով՝ www.zachranneprogramy.cz/en

Տնտեսական գործիքներ

Տեսակների պահպանությունը չի ենթադրում միայն արգելքներ և օրենսդրական սահմանափակումներ: Բնության պահպանության ոլորտի պետական մարմինները տարբեր ֆինանսական աղբյուրների միջոցով (Չեխիայի բնապահպանության պետական հիմնադրամ, [Բնապահպանության նախարարության](#) լանդշաֆտային ծրագրերը) աջակցում են հատուկ պահպանվող տեսակների պոպուլյացիաների խթանմանն ուղղված աշխատանքներին: Բազմաթիվ տեսակների, միջավայրերի պահպանությանն ուղղված հատուկ և գործնական միջոցառումներն իրականացվում են տարբեր հաստատությունների, ընկերությունների և ՀԿ-ների կողմից:

Ոչ պետական դերակատարների հետ համագործակցությունը

Բնության պահպանության ոլորտի պետական մարմինները հենվում են տարբեր շահագրգիռ կողմերի, հատկապես՝ տեղացի հողատերերի և շրջանների հետ համագործակցության վրա: Կամավորական հիմունքներով ձևավորվում են հողատերերից, տեղական համայնքներից և ՀԿ-ներից կազմված հողերի հավատարմագրային կառավարման գործունեություններ (տրաստ), որոնք պաշտպանում են պետության կողմից պահպանվող տարածքների համակարգի շրջանակներից դուրս գտնվող բնության արժեքավոր տարածքները: Գործում են կենդանիների փրկարարական մի քանի ոչ պետական կենտրոններ, որոնք հոգում են վիրավոր կենդանիների մասին և դրանց բաց թողնում վայրի բնություն: Հետազոտությունների և հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով համագործակցությունն իրականացվում է հատկապես համալսարանների և մի քանի ՀԿ-ների հետ:

Case Study

Եվրոպական գետնասկյուռի վերածնունդը

Եվրոպական գետնասկյուռը (*Spermophilus citellus*) տարածված գյուղատնտեսական վնասատու էր համարվում 1950-ականներին: Քառասուն տարի անց այն դարձավ ծայրահեղ վտանգված տեսակ, որին անհետացում էր սպառնում: Այսօր Չեխիայի Հանրապետությունում դրա պոպուլյացիան կարծես ապահով է, ի թիվս այլնի, Գործողությունների ծրագրի և տեղացի ֆերմերների հետ համագործակցության շնորհիվ:



Պահպանության կարգավիճակը

Եվրոպական գետնասկյուռը ներառված է ԲՊՄՄ-ի «Վտանգված տեսակների կարմիր ցուցակում»՝ որպես վտանգված տեսակ: Գետնասկյուռն ընդգրկված է նաև ԵՄ «Կենսամիջավայրերի մասին» հրահանգում, իսկ դրա բնակության վայրերը պաշտպանության նպատակով «Նատուրա 2000» ցանցի մաս են կազմում: Դրա տարածվածության հիմնական շրջանակը ներառում է Հարավարևելյան Եվրոպան: Չեխիայի Հանրապետությունում կենդանատեսակին կարելի է հանդիպել ընդհուպ մինչև Եվրոպական լեռնաշղթայի արևմտյան գագաթին:


Կենդանատեսակի պաշտպանությանն ուղղված գործողությունները

Չեխիայի Հանրապետությունում սկյուռների խմբերը մեծ մասամբ փոքրաթիվ էին և գտնվում էին ոչնչացման վտանգի տակ: [Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալությունը](#) մշակել է հատուկ Գործողությունների ծրագիր՝ կենդանատեսակի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով:

Գետնասկյուռի թվաքանակը մշտադիտարկվում է, ինչպես նաև նախաձեռնվել են պահման վայրերում բազմացման և տեսակների տեղափոխման ծրագրեր: Չնայած գետնասկյուռի մի քանի խումբ անկում է ապրել, կենդանատեսակի ընդհանուր թվաքանակը կայուն ան է գրանցում:

Պատասխանատու կառույցը

[Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալությունը](#) Գործողությունների ծրագիրն իրականացնող հաստատությունն է: Մի քանի տեղական ծրագրեր ֆինանսավորվել են Եվրոպական Միության [LIFE ծրագրի շրջանակներում](#):



Ուսանելի օրինակ

Երկարաժամկետ LIFE ծրագիր է իրականացվել սկյուռի՝ որպես Չեխիայի Հանրապետության «Չեսկե Ստրեդոհորի» պահպանվող լանդշաֆտային տարածքի տափաստանային բիոտոպներում բնակվող կարևորագույն կենդանատեսակի համար:

Ծրագրի նպատակը տարածքի կայուն օգտագործումն էր, ինչը նպաստեց ոչխարաբուծության և այծաբուծության գծով նոր ձեռնարկությունների, ինչպես նաև պանրի արտադրության հիմնադրմանը: Սա վառ օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է միաժամանակ պահպանել կենսաբազմազանությունը և աջակցել տեղական տնտեսությանը:

Նշենք նաև, որ 2014թ.-ին ծրագիրն արժանացել է [«Նատուրա 2000» մրցանակին](#):

Կապ՝

Տրեգա Բրզոբոհատա, Եվրոպական գետնասկյուռի վերաբերյալ գործողությունների ծրագրի համակարգող

Չեխիայի Հանրապետության Բնության պահպանության գործակալություն
tereza.brzobohata@nature.cz



Նկարներ՝ ՉՀ-ի ԲՊԳ-ի արխիվից:

Case Study

Կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus tulliana*) վերադարձը Հայաստան

Վաղ 2000-ականներին Կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus tulliana*) դարձավ ոչնչացման եզրին գտնվող կենդանատեսակ Հայաստանում: Այսօր (2021թ.-ին) երկրում ընձառյուծի թվաքանակը ավելացել է մինչև 10 առաձևյակ: Այս հաջողությունը պայմանավորված է եղել գոյություն ունեցող պահպանվող տարածքների հսկողության ուժեղացմամբ, ընձառյուծի ապրելավայրի տիրույթում նոր պահպանվող տարածքների և համայնքային պահպանվող տարածքների ստեղծմամբ, ինչպես նաև ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության, ԲՀՀ-ի հայաստանյան մասնաճյուղի, Կովկասի բնության հիմնադրամի, համայնքների և այլ հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության շնորհիվ:



Թիրախային երևույթի նկարագիրն ու պահպանության կարգավիճակը

Կովկասյան կամ պարսկական ընձառյուծը (*Panthera pardus tulliana*) համարվում է Կովկասյան Էկոտարածաշրջանի կարևորագույն կենդանիներից մեկը: Այս կենդանատեսակն ընդգրկված է Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում (2010թ.)՝ որպես խիստ վտանգված տեսակ, ԲՊՄՄ-ի Կարմիր գրքում և «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կենսակենսաբանական (CITES) 1-ին հավելվածում որպես վտանգված կենդանատեսակ և «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի 2-րդ հավելվածում՝ որպես խիստ պահպանվող կենդանատեսակ: Կենդանատեսակը բնակվում է Հայաստանի հարավային, այդ թվում՝ Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում: 2018թ.-ին Հայաստանի հյուսիսային մարզերից մեկում՝ Տավուշում, ֆոտոխցիկները նկարահանել են ընձառյուծ: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանում ընձառյուծի պոպուլյացիան կայուն է և տատանվում է 5-10 առաձևյակների միջակայքում: Ընձառյուծի համար հիմնական կեր հանդիսացող Բեզդարյան (*Capra aegagrus*) այծի թվաքանակն աճել է՝ 1200-ից (2006թ.) հասնելով ավելի քան 3000-ի (2021թ.):

Ընձառյուծին սպառնացող հիմնական վտանգը որսագողությունը, կենսամիջավայրի ոչնչացումն ու վնասումն է, ինչպես նաև սահմանային շրջաններում ընձառյուծի ապրելավայրի տիրույթում, ռազմական ուժերի առկայությունը:

Կատարված աշխատանքները

2002թ.-ին ԲՀՀ-ն սկսեց իրականացնել Հայաստանում ընձառյուծի պահպանությանն ուղղված ծրագիրը:

Այն ենթադրում էր գոյություն ունեցող պահպանվող տարածքների հսկողության ուժեղացում («Խոսրոփի անտառ», «Շիկահող» արգելոցներ), ինչպես նաև ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության և թիրախային համայնքների հետ համագործակցությամբ ընձառյուծի հիմնական կենսամիջավայր համարվող տարածքներում նոր պահպանվող տարածքների ստեղծում («Արևիք» ազգային պարկ, «Չանգեզուր», «Խուստուփ» արգելավայրեր):

2015թ.-ին ԲՀՀ-ն նախաձեռնեց Էկոմիջանցքի ստեղծման ծրագիրը: Ծրագրի արդյունքում Հայաստանի հարավում Էկոմիջանցքի շրջանակներում հիմնվեց 6 համայնքային պահպանվող տարածք:

Ընդհանուր առմամբ, երկրում հիմնադրվել է ավելի քան 91,881 հա նոր պահպանվող տարածք և 38,454 հա համայնքային պահպանվող պարածք, ինչը կազմում է ՀՀ ողջ տարածքի մոտ 5 տոկոսը:

Պատասխանատու կազմակերպությունները

Ծրագիրն իրականացվել է ԲՀՀ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից՝ ԲՀՀ-ի Շվեյցարիայի և Գերմանիայի մասնաճյուղերի ֆինանսական աջակցությամբ: Նոր պահպանվող տարածքների և Էկոմիջանցքի ստեղծման ծրագրերը ֆինանսական աջակցություն են ստացել ԲՀՀ-ի ցանցից, Կրիտիկական իրավիճակում գտնվող Էկոհամակարգերի հարցով գործընկերության հիմնադրամից (CEPF), Նորվեգիայի կառավարությունից (ԱԳՆ), Գերմանիայի կառավարությունից (ԳԴՀ ՏՀՀՆ՝ Վերակառուցման վարկերի բանկի միջոցով), ՄԱԶԾ/ԳԷՀ-ից:

Եզրակացություններ, առաջարկություններ, քաղաքական դասեր

Ընձառյուծի և այլ վտանգված կենդանատեսակների արդյունավետ պաշտպանության բնագավառում դեռևս շատ անելիքներ կան: Օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերը կատարելագործման և շարունակական զարգացման կարիք ունեն: Ընձառյուծների կենսամիջավայրերի ծածկույթի հետ կապված խնդիրը լուծելու նպատակով


անհրաժեշտ է հիմնել նոր պահպանվող տարածքներ և համայնքային պահպանվող տարածքներ:

Արդյունքների կայունությունն ապահովվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և Էկոմիջանցքի հիմնադրամի համատեղ ջանքերով:


Կապ՝

Կապ՝ կ.գ.թ. Կարեն Մանվելյան, ԲՀՀ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
kmanvelyan@wwfcaucasus.org

South East Lesser Caucasus Ecological Corridor and Specially Protected Nature Areas



Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները Protected Areas of Armenia





Լրացուցիչ կյուբեր.



Լրացուցիչ կուրսեր.



Լրացուցիչ կյուբեր.

Case Study

Սպիտակապոչ արծվի վերադարձը Ֆինլանդիա



Սպիտակապոչ արծիվը Հյուսիսային Եվրոպայի ամենախոշոր բնադրող գիշատիչ թռչունն է: Այն վեհաշուք թռչնատեսակ է: Հասուն թռչունների թևերի բացվածքը կարող է հասնել 190 սմ-ի: Լուսանկարը՝ Պետրի Ալրոթի

Պոպուլյացիայի վաղ պատմությունը

Սպիտակապոչ արծիվները (*Haliaeetus albicilla*), ինչպես բոլոր գիշատիչ թռչունները, երկարատև ժամանակ որսի թիրախ են եղել: Վաղ 1900-ականներին պետությունը նույնիսկ գումար էր վճարում թռչուններին սպանելու համար: Ընդունված մոտեցումը գիշատիչ թռչունների և առհասարակ բոլոր գիշատիչ կենդանիների թվաքանակի նվազեցումն էր՝ դրանց համար կեր հանդիսացող կենդանատեսակների պոպուլյացիաների ավելացման նպատակով: Սպիտակապոչ արծիվները դիտարկվում էին որպես վտանգավոր գիշատիչներ առնվազն ձկների և ծովացուլերի ձագերի համար: Թռչունների ֆիննական պոպուլյացիան արդեն իսկ մոտ էր ոչնչացմանը, երբ կենդանատեսակը ի վերջո պաշտպանվեց օրենքով 1920թ.-ին: Այնուամենայնիվ, ապօրինի որսը շարունակվեց մի քանի տասնամյակ:

Թունագիտական խնդիրների ի հայտ գալը

1960-ականներին և 1970-ականներին պոլիքլորացված բիֆենիլների, դուստի, ինչպես նաև դիոքսինի և մեթիլ սնդիկի լայն կիրառությունը լուրջ խնդիրներ էր հարուցում այնպիսի հիպերգիշատիչների համար, ինչպիսիք են արծիվները: Այդ հեղուկ ճարպային միացությունները կենտրոնացած են սննդային շղթայում, և գերգիշատիչները (այդ

թվում խոշոր գիշատիչ թռչունները) սննդի միջոցով մեծ քանակությամբ այդ քիմիական նյութերից են ստանում: Պոլիքլորացված բիֆենիլները, դուստը նվազեցնում են թռչունների վերարտադրության տեմպը: Ձվերի թաղանթը բարակում է, իսկ որոշ դեպքերում ձվերի բարակած թաղանթը կոտրվում է հասուն թռչնի քաշի ներքո: Դրանից բացի՝ պոլիքլորացված բիֆենիլները և դուստը, ինչպես նաև շրջակա միջավայրի մյուս թունավոր նյութերը թռչունների զարգացման խանգարումների պատճառ են դառնում: Չնայած թռչնի պաշտպանությանը՝ մի քանի տասնամյակ աճի ցուցանիշը ցածր էր:


ԲՀՀ-ն պոպուլյացիան փրկելու նպատակով աշխատանքային խումբ է ստեղծում, «Նատուրա 2000» ցանց

Թռչունների վերարտադրության ցածր տեմպը մեծացրեց անհանգստությունը կենդանատեսակի սիրահարների շրջանում, և վերջապես 1973թ.-ին Բնության համաշխարհային հիմնադրամը (ԲՀՀ) սպիտակապոչ արծիվի փրկելու նպատակով փորձագետների աշխատանքային խումբ ստեղծեց: Աշխատանքային խումբը սկսեց մաքուր սնունդ (սատկած խոզեր) տրամադրել արծիվների համար: Ավելին, ըստ «Բնության պահպանության մասին» օրենքի՝ խոշոր գիշատիչ թռչունների բույն ունեցող ցանկացած ծառ պաշտպանության ներքո է: Շատ դեպքերում բույներով ծառերը գտնվում էին կղզիներում, և այդ պատճառով տեղական բնապահպանական կենտրոնները բնադրման շրջանում կղզիներ այցելությունները սահմանափակելու որոշում կայացրեցին: Հետագայում, երբ Ֆինլանդիան հիմնեց «Նատուրա 2000» տարածքները, վերոնշյալ տեղանքներից շատերը ներառվեցին Պահպանվող տարածքների եվրոպական ցանցի մեջ:

Ակտիվ պահպանության արդյունքները

աքուր սնունդը, իրազեկվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև պաշտպանությանն ուղղված տարատեսակ միջոցառումները նպաստեցին պոպուլյացիայի աճին: Քառասուն տարվա ընթացքում պոպուլյացիան մեծ աճ է գրանցել, իսկ ներկայում թռչնատեսակը Կարմիր գրքում այլևս ներառված չէ:

Նախկինում թռչնի պոպուլյացիայի բնակության վայրը սահմանափակվում էր Բալթիկ ծովի կղզեխմբով, իսկ այժմ թռչնատեսակը հանդիպում է նորանոր տարածքներում՝ բնադրելով Ֆինլանդիայի հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածներում:



Կապ՝

Պետրի Ալրոթ, Կենսաբազմազանության կենտրոնի տնօրեն
 Ֆինլանդիայի բնապահպանության ինստիտուտ - SYKE
Petri.Ahlroth@syke.fi



Սպիտակապոչ արծիվները մրցում են սևուղե հայթայթելիս
Լուսանկարը՝ Պետրի Ալրոթի



Case Study

Թռչունների պահպանություն և աջակցություն Հայաստանի ձկնաբուծարաններին

Արմաշի ջրաճահճային տարածքները պատկանում են ձկնաբուծարաններին՝ այդպիսով համընկնելով որսորդության համար նախատեսված հանրային տարածքների հետ: Այդ պատճառով ջրային թռչունները կանգնած են երկու խոշոր սառնալիքի առջև՝ չվերահսկվող կրակոցներ և սահմանային միջավայրերի ոչնչացում: Տարածքում թռչնադիտարկման գործողությունների մշակումը ձկնատրսի կորուստը փոխհատուցելու հնարավորություն ընձեռեց, և մի քանի տարվա ընթացքում փոխվեց ձկնաբուծարանների ղեկավարության վերաբերմունքը՝ վայրի կենդանիների պահպանությունը դարձնելով առաջնահերթություն:



Թռչունների դիտարկում Արմաշի ջրաճահճային տարածքներում՝ Նկարի հեղ. իրավունք՝ Կարեն Աղաբաբյան

Կարևորագույն թռչնաբանական տարածք ձկնաբուծարանում

«Արմաշ» կարևորագույն թռչնաբանական տարածքը (ԿԹՏ) գտնվում է Արարատյան դաշտում՝ ծովի մակերևույթից 781-794 մ բարձրության վրա և հանդիսանում Հայաստանի ամենախոշոր ծածանաբուծարանը՝ ներառելով ընդհանուր 1,514 հա ծածկույթ ունեցող կիսաանապատային շորանով շրջապատված 29 հողային ջրավազան: Տարածքը վերջին անգամ գնահատվել է որպես ԿԹՏ 2013թ.-ին BirdLife International կազմակերպության կողմից: Ձկնաբուծական ջրավազանները պատկանում են մի քանի մասնավոր սեփականատերերի:

Բուծարանը սնուցվում է ջրի երկու խոշոր աղբյուրներից՝ Արաքս գետից ջուր բերող ջրանցքը և արտեզյան հորերը: Տարբեր տարածքներում բուսական ծածկույթը տարբեր է. ջրաճահճային տարածքներում գերակշռում են *Fragmites*-ը, *Typha*-ն և *Carex*-ը, իսկ կիսասանապատային տարածքներում աճում են *Chenopodium*-ը, *Lepidium*-ը, *Salsola*-ն *Alhagi*-ն և *Zygophyllum*-ը: Տարածքի որոշ ջրավազաններ տասնամյակներով չեն օգտագործվել՝ հոսելով դեպի աղի սեզոնային ջրաճահճային տարածքներ:



Ձկնաբուծական ավազանի խճանկարային կառուցվածքը՝ Նկարի հեղ. իրավունք՝ Կարեն Աղաբաբյան



Աղի ջրով ճահիճներ՝ Նկարի հեղ. իրավունք՝ Կարեն Աղաբաբյան

Ընդհանուր առմամբ, այստեղ արձանագրվել է 234 թռչնատեսակ, որոնց թվում 93-ը բուծվող տեսակ են, իսկ 141-ը այս տարածքով չվում են կամ ձմեռում այստեղ: Տարածքում դիտարկված տեսակները ներառում են ամբողջ աշխարհում վտանգված համարվող սպիտակագլուխ բադ (*Oxyura leucocephala* (վտանգված)), մարմարյա մրտիմն (*Marmaronetta angustirostris*(խոցելի)), կարմրագլուխ սուզաբադ (*Aythya ferina* (խոցելի)), սպիտակաաչք սուզաբադ (*Aythya nyroca* (գրեթե վտանգված)), սովորական կիվիվ (*Vanellus vanellus* (գրեթե վտանգված)), մեծ իլիկակցաք (*Limosa limosa* (գրեթե վտանգված)), սովորական տատրակ (*Streptopelia turtur* (վտանգված)), ինչպես նաև ազգային մակարդակով վտանգված սպիտակաաչք եղտյուրիկ (*Vanellus leucurus* (խոցելի)), սոխականման ճռիկահավ (*Locustella luscinioides* (խոցելի)), մոխրագույն սագ (*Anser anser* (խոցելի)), ծովային քարադր (*Charadrius alexandrinus*) (խոցելի)) և այլն: Տարածքն աստիճանաբար բնակեցվում է թևաբտիկ կիվիվի (*Vanellus spinosus*) կողմից, նշենք, որ սա Հայաստանում սպիտակագլուխ բադի, սպիտակաաչք եղտյուրիկի և ծովային քարադրի միակ հայտնի բազմացման վայրն է: Վայրը առաջնահերթ կարևորություն ունի, քանի որ այդտեղ բնակվում են տարատեսակ ջրային թռչունների երամներ, այդ թվում հայկական որորի (*Larus armenicus*) պոպուլյացիայի առնվազն 20 տոկոսը:



Աշխարհի մակարդակով վտանգված սպիտակագլուխ բադ՝ Նկարի հեղ. իրավունք՝ Կարեն Աղաբաբյան

Արմաշի տարածքում առաջնահերթ նպատակ է դիտարկվում ձկնաբուծությունը: Այն հանգեցնում է բուծարանների կառավարման նպատակների և պահպանության առաջնահերթությունների միջև հակասությունների, քանի որ մի կողմից ձկներով սնվող թռչնատեսակները ազդում են որսաքանակի վրա՝ սեփականատերերին ստիպելով կրակել դրանց վրա, իսկ մյուս կողմից՝ ձկան ինտենսիվ արտադրությունը պահանջում է ավազանների պակաս խճանկարային կառուցվածք, իսկ նման պահանջը հանգեցնում է ափամերձ բուսականության և թռչունների միջավայրերի կրճատմանը:

Տարածքի զգալի մասը (մոտ 2,020 հա) ներառված է որսորդության համար նախատեսված հանրային տարածքների մեջ: Դրա հետևանքը տարածքում որսորդների մշտական ներկայությունն էր, որոնք թույլ վերահսկողության պայմաններում գերազանցում էին որսի թռչունների թույլատրված քվոտաները, ինչպես նաև ապօրինի որսում բադերի, ճահճային թռչունների, ջրահավերի և ձկնկուլների վտանգված տեսակներ: Ավելին, տարածքում որսորդությունը արձակված փամփուշտների պատճառով աղտոտման հետևանք է ունենում, ինչը ջրաճահճային տարածքների և ջրային թռչունների համար հայտնի սպառնալիք է:

Արմաշի ԿԹՏ-ների և թռչունների պահպանությանն ուղղված կարևորագույն քայլը դրա պաշտոնական ճանաչումն էր որպես «Էմերալդ տարածք», ինչպես նաև հետագայում տարածքի համար կառավարման ծրագրի մշակումը: Կառավարման ծրագրում պետք է հաշվի առնվեն և՛ բուծարանների սեփականատերերի շահերը, և՛ պահպանությանն ուղղված առաջնահերթությունները: Կառավարման այդպիսի ծրագիրը պետք է նաև ներառի թվարկված սպառնալիքների մեղմացմանն ուղղված միջոցներ, ինչպես նաև գործարար մոդելների մշակում, որոնց դեպքում թռչնադիտարկումը կարող է ընդգրկվել ձկնարտադրության գործընթացում փոխհատուցելով ձկներով սնվող ջրային թռչունների պատճառով տեղի ունեցող որսաքանակի կորստին և փոխարինելով որսորդներից ստացվող հավանական եմակուտները:

Թռչնադիտարկումը փոխարինում է թռչունների որսին

2006թ.-ից ի վեր մեր ջանքերը կենտրոնացրել ենք Արմաշի ջրաճահճային տարածքներում թռչնադիտարկման զարգացման վրա: Չբոսաշրջիկներից պահանջվում էր մուտքավճար, որի նպատակը որսաքանակից ստացվող եկամտի փոխարինումն էր: Այդ պատճառով Արմաշի ձկնաբուծարանի սեփականատերերին խնդրեցին ձկնաբուծարանի մի մասը հատկացնել թռչունների ուսումնասիրության համար, ինչը նշանակում էր ձկներով սնվող թռչունների որսի դադարեցում, որսորդների մուտքի արգելք, եղեգից ափամերձ հատվածների մաքրման աշխատանքների դադարեցում, ինչպես նաև աղի ջրով ճահիճների բնական վիճակը չխաթարելը: Չբոսաշրջիկների թվի դանդաղ, բայց կայուն աճը վստահությամբ լցրեց Արմաշի ղեկավարությանն առ այն, որ մոդելն աշխատում է: 2013թ.-ից զբոսաշրջիկների թիվն սկսեց արագ աճ գրանցել, ինչը բարձրացրեց մոդելի կայունության մակարդակը: Այսպիսով, նույնիսկ 2020-2021թթ.-ին՝ COVID-19 համավարակի և զբոսաշրջիկների թվի զգալի անկման ընթացքում, ձկնաբուծարանի ղեկավարությունը շարունակեց հավատարիմ մնալ պահպանությանն ուղղված նպատակներին:



Ազգային մակարդակով պահպանվող ոտնացուլիկ
Նկարի հեղ. իրավունք՝ Կարեն Աղաբաբյան

BirdLinks Armenia

Նախաձեռնությունը գլխավորել են մի քանի բնապահպան գիտնական, որոնք 2014թ.-ին հիմնեցին BirdLinks Armenia ՀԿ-ն: Նախաձեռնությունը սեփական միջոցներից էր ֆինանսավորվում, քանի որ ուղեկցորդով թռչնադիտարկումներից ստացվող հոնորարը ծառայեց որպես որսաքանակի կորստի փոխհատուցում փոխարինելով որսորդներից ստացվող հավանական վճարին:

Որսորդության նվազումն ու տարածքի միջավայրերի խճանկարային կառուցվածքը հանգեցրին այն թռչնատեսակների թվի աճին, որոնք բազմանում են այսպես կոչված «թռչունների պահպանության գոտում»: Օրինակ՝ սպիտակագլուխ բադի թիվը աճեց՝ 4-ից հասնելով 15 բնադրող զույգի, իսկ ոտնացուպիկի թիվը մոտավորապես 20-ից հասավ 80-ից ավել զույգի:

Այս հարցում կարևորագույն փաստն այն է, որ Արմաշի ձկնաբուծարանը շարունակում է ձկներ աճեցնել «թռչունների պահպանության գոտում»: Այսպիսով, Նշյալ մոդելը փոխշահավետ է ձկնաբուծարանի ղեկավարության և վայրի կենդանական աշխարհի համար: Այս դեպքը ուսուցանում է, որ համակողմանի վերլուծության և հետևողական իրականացման վրա հիմնված ճիշտ մոտեցումը կարող է աջակցել պահպանությանը նույնիսկ այնպիսի զարգացող շուկայում, որպիսին է Հայաստանը:

Արմաշի ջրաճահճային տարածքների զարգացման հեռանկարները ներառում են մի քանի ուղղություն՝

- Տարածքի պաշտոնական ճանաչումը որպես «Էմերալդ տարածք»:
- Տարածքի սահմանումը որպես Ռամսարի տարածք:
- Տարածքի սահմանումը որպես առաջնահերթ գոտի՝ ըստ «Աֆրիկյան-եվրասիական միգրացվող ջրային թռչունների պահպանության մասին» համաձայնագրի (AEWA):
- Ինտեգրված կառավարման ծրագրի մշակում, որում հաշվի կառնվեն տարածքի՝ որպես միջազգային պահպանության գոտու առաջնահերթությունները, ինչպես նաև ձկնաբուծարանի ղեկավարության շահերը:
- Տարածքի բացարձակ բացառումը որսորդության համար նախատեսված հանրային տարածքների ցանկից:
- Տարածքի շրջակա միջավայրի մաքրում թափոններից և քաղաքային թափոնների կառավարման խնդրի լուծում:
- Այցելուների կենտրոնի հիմնումը Արմաշի ջրաճահճային տարածքներում:
- Տարածքում միջազգային և ազգային շուկաների համար թռչնադիտարկման և վայրի թռչուններին առնչվող զբոսաշրջության հետագա խթանումը:
- Աջակցություն տարածքին հարակից գյուղերում հյուրընկալության ենթակառուցվածքների ստեղծման հարցում:
- Մոդելի կիրառման տարածումը այլ ձկնաբուծարաններում:

Այսպիսով, տարածքը կլինի միջազգային պահպանության հովանոցի ներքո՝ ձեռք բերելով ֆինանսական կայունություն՝ բավարարելով բոլոր շահագրգիռ գործարար և բնապահպան կողմերին:

Կապ

գ.դ. Կարեն Աղաբաբյան
BirdLinks Armenia ՀԿ
karen.aghababyan@gmail.com

Case Study

ԿԻՊՐՈՍԻ

Կենսաբազմազանության մշտադիտարկումը՝ դեպքի ուսումնասիրություն

Կիպրոսը, որը ԵՄ անդամ պետություն է 2004թ.-ից, ունի կենդանատեսակների և բուսատեսակների հարուստ բազմազանություն, այդ թվում՝ Էնդեմիկ տեսակներ և միջավայրեր: Այնուամենայնիվ, կենսաբանական հետազոտությունների առումով երկրի կարողությունները բավական սահմանափակ են, ինչը հանգեցնում է կենսաբազմազանության մշտադիտարկման ջանքերի անհավասարաչափ բաշխվածության: Սա հանգեցրեց առաջնահերթությունների սահմանման բարելավման անհրաժեշտությանը:

Կիպրոսում բուսական աշխարհի համակարգային արձանագրումն ու փաստաթղթավորումը սկսվել է 1987թ.-ին: Կիպրոսում տասնամյակներով իրականացվել են այնպիսի հետաքրքրություն ներկայացնող ողնաշարավոր կենդանիների մշտադիտարկումը, ինչպիսիք են ծովային կրիաները և մուֆլոնը: Վտանգված ծովային կենսաբազմազանության փաստաթղթավորումը (և դրանց պահպանությանն ուղղված ջանքերը) սկսվել է 1980-ականներին: BirdLife Cyprus կազմակերպությունը 1970թ.-ից ի վեր հրապարակում է թռչունների մասին ոչ համակարգված արձանագրումների վերաբերյալ տարեկան գեկույցներ, սակայն ամենաերկարաժամկետ համակարգված մշտադիտարկման սխեման (ջրային թռչունների՝ ամսական կտրվածքով իրականացվող ուսումնասիրություններ) սկիզբ է առել 2005թ.-ից: Կիպրոսում ճպուռների ուսումնասիրությամբ զբաղվող խումբը և Կիպրոսում թիթեռների ուսումնասիրությամբ զբաղվող խումբը վերջերս սկսել են համապատասխան համաեվրոպական նախագծերին աջակցել տվյալների տրամադրմամբ: Իրականացվել են բուսատեսակների լայնածավալ արձանագրումներ, սակայն առավել մեծ ճշգրտության տեղեկությունները (կետային քարտեզներ, բույսերի պոպուլյացիաների կազմն ու փոփոխությունները) հիմնականում բացակայում են:

2007թ.-ը Կիպրոսի համար Միջավայրերի վերաբերյալ հրահանգով նախատեսված հաշվետվությունների պարտադիր ներկայացման առաջին սահմանված ժամկետն էր (2004-2006 թթ. ընկած ժամանակահատվածի համար): Վերոնշյալում արտացոլվեց Կիպրոսի կենսաբազմազանության վերաբերյալ գիտելիքների պակասը՝ չնայած Կենսաբազմազանության համապարփակ տվյալների շտեմարան (BioCyprus, որը բաց չէ հանրության համար) մշակելու վերաբերյալ արված հայտարարությանը: Բույսերի կարմիր գիրքը կազմվել է 2007թ.-ին՝ վտանգված և հազվագյուտ բույսերի տաքսոնների վերաբերյալ աշխարհագրական տվյալների շտեմարանի հետ միասին: Բուսատեսակների կարգավիճակի գնահատումներն իրականացվել են ամուր հիմքերի վրա, իսկ մշտադիտարկման ծրագրերը կազմվել են Միջավայրերի վերաբերյալ հրահանգի 2-րդ հավելվածում ներառված բույսերի ավելի քան 10 տաքսոնների համար:

Կիպրոսը հիմնեց մշտադիտարկումների համակարգ և՛ ծովային, և՛ ցամաքային միջավայրերի ու տեսակների համար՝ 2012թ.-ին հաշվետվություններին առնչվող պահանջները բավարարելու նպատակով: Մշտադիտարկումների համակարգը կախված է բնության պահպանվող տարածքներում միջավայրերի և տեսակների մշտադիտարկում, գնահատում և վերլուծություն իրականացվող ենթակապալառուներից (հրահանգներով պահանջվում է ամբողջական տարածքային ծածկույթ): Հաշվետվություններում միջավայրերի և անոթային բույսերի

վերաբերյալ վերջերս ներկայացված տվյալների որակը լավն է՝ ի տարբերություն կենդանիների խմբերին վերաբերող տվյալներին, որոնց դեպքում գնահատումները դեռևս մեծապես հիմնվում են էքստրապոլյացիաների (արտարկման) վրա:

Կիպրոսի դեպքը ցույց է տալիս հարուստ կենսաբազմազանություն ունեցող երկրի օրինակ, որը, սակայն, չունի կենսաբազմազանության հետազոտություններ իրականացնելու ամուր ավանդույթներ: Այլ երկրներում նույնպես մի քանի հայտնի տեսակների համակարգված մշտադիտարկումը սկսվել է 1980-ականներին, հիմնականում որպես հետազոտական հաստատությունների և ՀԿ-ների գործունեության մաս: Մշտադիտարկման ընդլայնման և դրան առաջնահերթություն տալու խթան հանդիսացան Միջավայրերի վերաբերյալ հրահանգով սահմանված պարտավորությունները: Հաշվետվությունները բացահայտեցին գիտելիքների պակասը, հետևաբար, որպես խնդրի լուծում, հիմնվեց միջավայրերի և ընտրված տեսակների մշտադիտարկման համակարգ (Կիպրոսում բավականին վերջերս):

Կենսաբազմազանության անընդհատ մշտադիտարկման հարցում չափազանց կարևոր գործոն է պարտավորությունների գոյությունը, ինչը ԵՄ անդամ պետությունների դեպքում սահմանված է Բնության վերաբերյալ հրահանգներով: Հաշվետվությունների կանոնավոր ներկայացումը միջազգային մակարդակով համեմատությունների հնարավորություն է ընձեռում, բացահայտում է բաց կողմերը՝ հնարավոր դարձնելով բնության պահպանության ոլորտի պետական մարմինների կողմից խնդիրներին պատշաճ ձևով արձագանքելը: Ազգային մարմինների կողմից կենսաբազմազանության մշտադիտարկման համակարգված և ֆինանսական երաշխիքներ պարունակող պահանջը կարող է խթանել և զգալիորեն բարելավել մշտադիտարկման և հետազոտական կարողությունները: